

## ՄԵԾ ՊԱՀՔԻ ԱՐԺԵՔԸ

Մեր Եկեղեցում Մեծ Պահքին կարևոր տեղ է տրված: *«Ինչո՞ւ: Ի՞նչ արժեք և նշանակություն ունի այն: Անցյալում մեր հայրերի սահմանած օրենքները ի՞նչ կապ ունեն այսօրվա մեր կյանքի հետ: Երբ ամբողջ աշխարհը փոխվել է և փոխվում է, արդյոք ավելորդ չէ՞ խոսել «պահք-մահքի» մասին: Եվ դեռևս, Մեծ Պահքի հետ կապված ուրիշ բաներ. մեղք, մեղքի գիտակցություն, պղծում, ապաշխարություն կոչվածը և այլն: Ծիծաղելի չէ՞ արդյոք այսպիսի բաների մասին խոսելը գիտության և աստղանավորության ներկա դարում»:*

Շատերը ոչ միայն ամոթ, այլև անհանդուրժելի են գտնում վերոհիշյալների մասին խոսելը, դրանք համարելով սգիտության, սնոտիապաշտության, միամտության և նման բաների արդյունք:

Սակայն, ծառը իր պողպից է ճանաչվում:

Ներկա կյանքում երևացող չափից դուրս պատությունը իր պտուղներն է տալիս: Մեր այսօրվա քաղաքակիրթ կյանքը լցնող մի քանի իրողությունների պարզ մատնանշումն իսկ բավական է հասկանալու, թե ինչի ենք հասել այսպես մտածելով ու գործելով:

**1. Ընտանեկան կառույցի խախտում:** Ամենուրեք ամուսնալուծումների երկար շարքը բավական է հստակ պատկերացում կապվելու այս մասին:

**2. Մեռի այրասերումը և շահագործումը:** Անբարոյականության քարոզությունը, անչափահասների սեռային կյանքը, անհամար վիժումներն ու դրանց ցավագին հետևանքները և այլն:

**3. Չարության աճը:** Դաստիարակությունը բոլոր ձևերով - մամուլ, վեպեր, գծանկար-պատմվածքներ, հեռուստացույց, կողոպուտներ, ավազակային հարձակումներ, առևանգումներ, բռնաբարություններ, սպանություններ, կանխամտածված սառը ոճիրներ, ահաբեկչություն և այլն:

#### **4. Անծրագիր, աննպատակ և անտարբեր կյանք:**

Կյանքի դեմ դառը արտահայտություններ, անվերջ դժգոհություններ, փախուստ պատասխանատվություններից՝ թմրեցուցիչների գործածությամբ կամ այլ ինքնախաբեկություններով, քաջության պակասը, ծայրահեղ հուսալքումները, անտարբերությունը և բազմաթիվ անձնասպանությունները:

Այս բոլորից հետո ի՞նչ եք կարծում, կարելի՞ է սրանք թոյլատրելի, բնական և օրինաչափ համարել: Եթե այո՛, այն ժամանակ անուրանալի ձևով պիտի ընդունենք նաև մեղքի ներկայությունը մեր շրջապատում և մեր կյանքից ներս:

Եթե մեղքը կա և կա անշուշտ, երբեք ավելորդ չպիտի լինի խոսել պղծման ու ապաշխարության մասին:

Պարզ ու հստակ է Աստու խոսքը և Նրա պահանջած պահեցողությունը այս է. *Ուղղումը մեր կյանքի, թերությունների սրբազրությունը, մարդկային և ընտանեկան հարաբերությունների բարեփոխումն ու բարվորումը, բարոյական ամուր և օրհնաբեր սկզբունքների հասկացողությունը ու մեր պատասխանատվությունների ու դերի գիտակցումը:*

Պահեցողությունը միայն որոշ տեսակի ուտելիքներից մեկ վերլուկելու նպատակ չի հետապնդում, այլ մղում է, որ մեր անձերը վերծպահենք հոգեկան աշխարհը փչացնող չար խորհուրդներից ու խոսքերից: Հովհան Մանդակունի Հայոց Հայրապետը ասում է. *«Պահքը միայն ուտել-խմելը չէ, այլ խոսափելն է ամեն տեսակ մեղքերից: Պահք ենքիչ խոսելը, չբարկանալը, չնախանձելը, վրեժխնդիր չլինելը, խոնարհությունը և հնազանդությունը»:*

Սուրբ Գրիգոր Տաթևացին ավելացնում է. *«Մտանան միշտ պահքի մեջ է, ոչինչ չի ուտում, բայց մեղք գործելուց չի դադարում ու չի հոգնում: Ոմանք պահոց օրերին ոչխարի միս չեն ուտում, բայց մարդու միս են ուտում, որն ավելի ծանր մեղք է»:*

Այսօր Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին իր հավատացյալներին թելադրում է պահք պահել, որը նշանակում է **աղոթքով, ծուծկալությամբ, մաքրությամբ և արդարությամբ փակել մեղքի ճանապարհը:**

Ահա այս է Մեծ Պահքի արժեքը:

Աստված նմանվում է բարի և իմաստուն մի պարտիպպանի, որը բացված ակոսներից թունավոր խոտերն է մաքրում, պտղատու ծառերից անպետք և արվելորդ ձյուղերն է կտրտում, որպեսզի ծառը տեսքով գեղեցիկ, հոտավետ և քաղցրահամ պտուղներ տա: Նա մեր բարի ու արդար գործերը և մեկ ուրախացնող բարիքները չի խլում մեզանից, այլ ընդհակառակը, արատում է մեկ ստորացնող մեղքերից, կրքերից ու ցանկություններից:

Ինչպես Եսայի մարգարեն ժամանակին զգուշացրեց իր ժողովրդին սուտ մարգարեներից և հորդորեց նրանց հեռու մնալ անբարոյական կյանքից ու անարդարություններից, սիրել իրար անկեղծորեն, հավատարիմ մնալ իրենց հայրերի սուրբ հավատքին և պահել Աստու բոլոր պատվիրանները, նույնպես Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին խրատում է իր հավատացյալներին հեռու մընալ սուտ մարգարեներից ու կեղծավորներից: **Հեռու մնալ** նշանակում է՝ ամուր կապվել մեր նախահայրերի սուրբ հավատքին, լինել արդարամիտ, ուղղամիտ, սիրել Աստուն ամբողջ սրտով, մտքով ու հոգով և չհալածել Աստու բարի սպասավորներին, որոնք իրենց հոգևոր ծառայությամբ Նրա փառքն են հյուսում: Ամեն: